ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԵՎ ԼՈՆԴՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

1920 թ. ապրիլին կայացած Սան Ռեմոյի խորհրդաժողովի նախօրեին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջի նախաձեռնությամբ Դաշնակից պետությունների զինվորական ներկայացուցիչները քննարկեցին Օսմանյան Թուրքիայի նկատմամբ գործադրվելիք ռազմական պատժամիջոցների հարցը, եթե վերջինս հրաժարվեր իրագործել Անտանտի երկրների հետ ստորագրվելիք հաշտության պայմանագրի դրույթները: Օսմանյան Թուրքիան ենթակա էր պատժի այն բանի համար, որ, չնայած նախկինում Անգլիայի ու Ֆրանսիայի ցուցաբերած օգնությանը Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության պահպանման համար պայքարում, 1914 թ. անցել էր Գերմանիայի կողմը:

Նշյալ դիրքորոշումը բխում էր դեռևս 1916 թ. նոյեմբերի 9-ին լոնդոնյան Սիթիի քաղաքապետարանում պրեմիեր մինիստր Հերբերտ Հենրի Ասքվիթի Հայաստանի ազատագրության և հայ ժողովրդի փրկության մասին արած պաշտոնական հայտարարությամբ Մեծ Բրիտանիայի ստանձնած միջազգային-իրավական պարտավորությունից[1]: Քանի որ ռազմական

---

[1] Տե՛ս "Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества: документы и комментарий", т. 2, ч. 2. составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Ю. Г. Барсегов, Москва, 2005, էջ 186: Հայաստանի ազատագրության վերաբերյալ Անտանտի կառավարությունների ղեկավարների և արտգործնախարարների հայտարարությունների

օժանդակության կազմակերպումը կախված էր նյութական միջոցների առկայությունից և «անհաղթահարելի բեռ» էր պատերազմական հսկայական կորուստներ ու վնասներ կրած եվրոպական պետությունների համար, ուստի 1920 թ. ապրիլի 18-ին Սան Ռեմոյի Դևաշան առանձնատանը կայացած հանդիպման ժամանակ Դ. Լլոյդ Ջորջը Մեծ Բրիտանիայի դաշնակից պետությունների՝ Ֆրանսիայի ու Իտալիայի պատվիրակությունների ղեկավարներին առաջարկեց դիմել աշխարհի ամենահարուստ ու ամենազարգացած պետությանը՝ ԱՄՆ-ին, որպեսզի վերջինս, իբրև օգնություն, 10 մլն ֆունտ ստեռլինգի փոխառություն տրամադրի Հայաստանին[2]: Միաժամանակ, 1920 թ. ապրիլի 20-ին Դաշնակից երկրների Գերագույն խորհրդի հանդիպման ժամանակ նա առաջարկեց դիմել ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին՝ վերցնելու Հայաստանի մանդատը՝ հովանավորությունը[3]: Ճիշտ է, այս տեսանկյունից Հայաստանն ուսումնասիրելու նպատակով դեռևս 1919 թ. աշնանը Հայաստան էր ժամանել ամերիկյան գեներալ Ջեյմս Հարբորդի բազմամարդ ռազմական հանձնախումբը, այնուամենայնիվ ԱՄՆ-ի կողմից հայկական պետության հովանավորը լինելու և Հայաստանի պետական սահմանների որոշման ժամանակ միջնորդի դերում հանդես գալու խնդիրները հանգամանորեն քննարկվեցին Դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի 1920 թ. ապրիլի 19–26-ը Սան Ռեմոյում (Իտալիա) կայացած նստաշրջանում: Այն Օսմանյան Թուրքիայի հետ Դաշնակից

ու պառլամենտական ելույթների պատկառելի շարքում ժամանակագրական առումով առաջինը Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստր Հ. Հ. Ասքվիթի վերոնշյալ հայտարարությունն էր (տե՛ս նույն տեղում, էջ 225–226):

[2] Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923)», Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, փաստ. N 331, էջ 619:

[3] Տե՛ս նույն տեղում, փաստ. N 332, էջ 634:

տերությունների հաշտության պայմանագրի մշակման կարևոր շրջափուլերից էր: Նրա աշխատանքներին մասնակցում էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ղեկավարները, ինչպես նաև Ճապոնիայի ու ԱՄՆ-ի ներկայացուցիչները՝ դիտորդի կարգավիճակով: Հունաստանի ու Բելգիայի ներկայացուցիչները խորհրդակցությանը մասնակցում էին միայն իրենց պետությանը վերաբերող հարցերի քննարկման ժամանակ:

ԱՄՆ-ը հեռու էր եվրոպական պետությունների մրցակցությունից ու փոխադարձ անբարյացակամությունից: Նա մասնակցություն չէր ունեցել և, հետևաբար, շահագրգռվածություն չուներ եվրոպական դարավոր վեճերում, ինչը երաշխավորում էր այդ պետության անկողմնակալությունը Հայաստանի հովանավորի դերում և Օսմանյան Թուրքիայի հետ սահմանագծի որոշման ժամանակ: Իսկ ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական ու ռազմաքաղաքական հզորությունն ապահովելու էր Հայկական հարցի վերաբերյալ այդ պետության կայացրած որոշումների ազդեցիկությունը[4]:

Հայաստանի Հանրապետության հովանավորի դերում ԱՄՆ-ին տեսնելու Դաշնակիցների հույսերը չարդարացան: 1920 թ. հունիսին ԱՄՆ Կոնգրեսը մերժեց ՀՀ հովանավորությունը: Այդ առիթով անգլիացի դիվանագետ Դ. Լլոյդ Ջորջն իր հուշերում նշում է. «Հենց այդ պահից հայկական անկախ պետությունը վերածվեց անհուսալի նախագծի»[5]: Այնուամենայնիվ, ըստ 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի, հենց ԱՄՆ-ի նախագահին վերա-

---

[4] Տե՛ս Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, том II, Москва, 1957, էջ 392:

[5] Նույն տեղում, էջ 454:

պահվեց անկախ Հայաստանի սահմանների գծումը[6]: Սակայն Թուրքիայում իշխանության եկած քեմալականները ոչ միայն չճանաչեցին Սևրի պայմանագիրը և որևէ տարածքային զիջում չկատարեցին Հայաստանին, այլև 1920 թ. սեպտեմբերին ռազմական գործողություններ սկսեցին ՀՀ դեմ և, անտեսելով նոյեմբերի 22-ին հրապարակված ու անհապաղ ուժի մեջ մտած Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, զավթեցին Արևելյան Հայաստանի մեծ մասը: Այս առիթով հատկանշական է ՀՀ պաշտոնական պատվիրակության տեղեկատվական բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 15-ով թվագրված փաստաթուղթը, որում, որպես ՀՀ անկման երեք գլխավոր պատճառ, մատնանշված էին Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունների կողմից այն չվավերացնելը, ՀՀ աննպաստ միջազգային իրադրությունը, նրա սահմանների անորոշությունը, ինչպես նաև Դաշնակիցների կողմից Հայաստանի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ռազմական ու նյութական օգնության չտրամադրումը[7]:

Այսպիսով, Մեծ Բրիտանիան և մյուս Դաշնակից պետությունները անմիջականորեն մեղավոր են խոստացված ռազմական ու նյութական աջակցությունը Հայաստանի առաջին հանրապետությանը չտրամադրելու և, դրանով իսկ, նրա գոյությունը վտանգելու համար: Քննադատելով անդրկովկասյան անկախ հանրապետությունների նկատմամբ ոչ թե գործուն աջակցության, այլ սին խոստումների ու դատարկ քաջալերանքի՝ Դաշնակից պետությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի կործանարար քաղաքականությունը՝ անգլիացի պատմաբան և փիլիսոփա Առնոլդ Թոյնբին այն բնորոշել է որ-

---

[6] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923)», փաստ. № 338, էջ 676:
[7] Տե՛ս Նասիպեան Ա., Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915–1923, Պէյրութ, 1994, էջ 234:

պես «թե՛ բարոյական և թե՛ քաղաքական վրիպում»[8]: Դաշնակիցների վարած քաղաքականությունն անբարոյական էր ու անարդար, քանի որ, գիտենալով հանդերձ, որ մտադիր չեն գործնական օգնություն ցույց տալ Հայաստանին, նրանք շարունակում էին այդ երկրի կառավարությանը խաբել դատարկ խոստումներով: Մեղքի իրենց բաժինն ունեին նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության և կողմնորոշման պատասխանատուները:

Դաշնակից պետություններն անմիջականորեն մեղավոր են նաև Հայաստանն Անդրկովկասում քաղաքական գերիշխանության համար պայքարի գործիքի վերածելու և այն ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի օգտագործելու համար: Արդեն 1920 թ. կեսերին ակնհայտ էր, որ Անդրկովկասի քաղաքական նոր իրադրությունը կենտրոնանում էր իրենց ընդհանուր թշնամիների դեմ պայքարում սերտ գործակցող, միաժամանակ ռազմաքաղաքական գերիշխանության համար միմյանց դեմ մրցակցող Խորհրդային Ռուսաստանի ու քեմալական Թուրքիայի ձեռքում:

Մեր կարծիքով՝ 1920 թ. դեկտեմբերի սկզբին Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը և նրան Ալեքսանդրապոլի ոչօրինական պայմանագրի պարտադրումը ոչ այլ ինչ էին, եթե ոչ բրիտանական մերձավորարևելյան քաղաքականության պարտություն, որը փաստացի դարձավ նաև Հայաստանի առաջին հանրապետության պարտությունը:

Անդրկովկասյան հանրապետությունների խորհրդայնացումից հետո առավել որոշակի դարձավ բրիտանական կառավարության պատրաստակամությունը՝ պաշտպանելու քեմալականներին ընդդեմ բոլշևիկների՝ քեմալական ռազմուժի միջո-

---

[8] Toynbee A. J., Survey of International Affairs 1920–1923, Oxford, 1925, p. 369, 373–374.

ցով Կարմիր բանակի առաջխաղացումը դեպի հարավ բացառելու նպատակով: Բրիտանական կառավարությանն այդ քաղաքական ուղու վրա դնելու գործում վճռորոշ եղան ազատագրական շարժումների վերելքն անգլիական գաղութներում՝ Հնդկաստանում, Եգիպտոսում և Իռլանդիայում, ինչպես նաև Դաշնակիցների միջև ներքին հակասությունների սրումը, ինչը բրիտանական կառավարող շրջաններին դրդեց վերանայելու մերձավորարևելյան քաղաքականության ընթացքը:

Մեծ Բրիտանիայում ուժեղացող թրքանպաստ կողմնորոշումը նախևառաջ արտահայտվում էր Սևրի պայմանագիրը հօգուտ Թուրքիայի վերանայելու պահանջի մեջ: Դրա բավարարումը, ըստ անգլիացի պետական գործիչների, պետք է գոհացներ մահմեդական աշխարհ, նպաստեր Անգլիայի իշխանության վերականգնմանը Հնդկաստանում և Եգիպտոսում, վերջ տար «երկարաձգված պատերազմի» դրությանն Արևելքում: Այս տեսանկյունից առանձնակի կարևորվում էր պայմանագրի տարածքային պահանջներին վերաբերող պայմանների վերանայումը: Դա պետք է մղեր քեմալականներին խզելու հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ, ինչի արդյունքում Թուրքիան պետք է վերածվեր Դաշնակիցների և Խորհրդային Ռուսաստանի միջև պատվար պետության, իսկ Լոնդոնի կառավարությունն էլ՝ ստանար հզոր լծակ՝ վերացնելու իր գաղութային կայսրության հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարը սնող քաղաքական-գաղափարական հիմքերն այնքանով, որքանով դրանք կապված էին համաշխարհային սոցիալիստական հեղափոխության գաղափարի իրագործման հետ:

Խնդիրը Մեծ Բրիտանիայի համար ուներ նաև տնտեսական կարևորություն: Համաշխարհային պատերազմից նոր դուրս եկած և վերականգնման ճգնաժամի մեջ անխուսափե-

լիորեն ընկած երկիրը հնարավորություն կստանար թուրքական եկամտաբեր շուկայի հաշվին վերականգնելու բրիտանական արտաքին առևտրի նախկին ծավալները: Դրանք էապես կրճատվել էին բոլշևիկյան հեղաշրջման հաղթանակից հետո, երբ Մեծ Բրիտանիան, խզելով ռազմաքաղաքական հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ, ըստ էության, կորցրել էր ռուսաստանյան տարողունակ շուկան, իսկ քեմալական կառավարության հետ ունեցած խնդիրների հետևանքով թուլացել էին նրա տնտեսական դիրքերը Թուրքիայում:

Քաղաքական և տնտեսական նոր իրադրության պայմաններում Հայկական հարցի լուծումը ոչ միայն դուրս էր թողնվելու Մեծ Բրիտանիայի պետական հետաքրքրությունների ցանկից, այլև դրա փոխարեն օրակարգային էր դառնում վիլսոնյան սահմաններում Հայաստանի ընդարձակումը բացառելու խնդիրը, քանի որ Հայաստանի վրայով բոլշևիզմի ազդեցության մոտեցումը Կ. Պոլսին չէր բխում ո՛չ Մեծ Բրիտանիայի, ո՛չ էլ Թուրքիայի շահերից: Պատահական չէ, որ Լոնդոնի կառավարությունը հարմար առիթը բաց չէր թողնում կա՛մ սրելու, կա՛մ էլ հրապարակային բնույթ հաղորդելու խորհրդա-քեմալական հակասություններին և օգտագործելու դրանք ի շահ իրեն: Այսպես, 1921 թ. հունվարի 8-ին և 19-ին Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ Ալ. Բեկզադյանը ԹԱՄԺ կառավարության արտաքին գործերի վարիչի պաշտոնակատար Ահմեդ Մուխթարին բողոքի հուշագրեր ներկայացրեց Ալեքսանդրապոլի և Կարսի գավառների ամբողջական ավերման առիթով ու պահանջեց, որ թուրքական զորքը հեռանա այդ շրջաններից: Այս առթիվ Հնդկաստանի փոխարքա լորդ Չելմսֆորդը հեռագրեց Լոնդոն՝ հասկացնելով, որ Մոսկվայի ու Անկարայի միջև «պառակտումը» «շեշտվի» մամուլում: Առավել գործնական էր նույն փաստի առիթով Մեծ Բրիտանիայի արտգործնախարա-

ության եզրահանգումը, թե Ռուսաստանի կողմից Թուրքիայի քայքայումը փաստ էր, որը Լոնդոնը պետք է օգտագործեր Թուրքիայի հետ բանակցությունների ընթացքում՝ Անկարային կանգնեցնելով Դաշնակիցների և Ռուսաստանի միջև ընտրություն կատարելու անհրաժեշտության առջև[9]:

Մեծ Բրիտանիայի նախարարների խորհուրդը Դաշնակիցներին առաջարկեց, որ քեմալականներն «առանց նախապայմանի» հրավիրվեն 1921 թ. փետրվար-մարտին կայանալիք Լոնդոնի խորհրդաժողովին ու նաև պատրաստ էր անհրաժեշտության դեպքում Անկարային հասկացնել, որ կողմերի միջև գոհացուցիչ համաձայնության դեպքում Մեծ Բրիտանիան պատրաստ է նյութական օգնություն ցույց տալ Թուրքիայի քայքայված տնտեսությունը վերականգնելու համար: Քանի որ Ֆրանսիան ու Իտալիան չնվազող հետևողականությամբ շարունակում էին Թուրքիայից տնտեսական մենաշնորհներ կորզելու քաղաքականությունը, ուստի Մեծ Բրիտանիայի խնդիրն էր ոչ միայն այս հարցում ետ չմնալ դաշնակիցներից, այլև՝ առաջ անցնել նրանցից: Այս պայմաններում Մեծ Բրիտանիայի պահպանողական կուսակցության առաջնորդ, պառլամենտի Համայնքների պալատի ղեկավար էնդրյու Բոնար Լոուն արտգործնախարար լորդ Ջորջ Նաթանիել Քերզոնին զգուշացնում էր. «Երկու հանգամանք ինձ թվում են կենսական: Առաջինն այն է, որ պետք չէ պատերազմի մեջ մտնել հանուն Մոսուլի, իսկ երկրորդը՝ եթե ֆրանսիացիները ... չմիանան մեզ, ապա պետք չէ, որ մենք առանձին կռվենք թուրքերի դեմ՝ պարտադրելու համար ինչ որ մնացել է Սևրի դաշնագրից»[10]: Դաշնակիցների հարաբերություններում առկա տարաձայնություններն

---

[9] Տե՛ս Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 244:

[10] Նույն տեղում, էջ 249: Նաև՝ Nicolson Harold, Curzon: The last phase 1919–1925: A Study in post-war diplomacy, Boston, New York, Mifflin, 1934, էջ 331:

ու Մեծ Բրիտանիայի կեցվածքում նկատվող զգուշավորությունն ինքնավստահություն ու համարձակություն էր ներշնչում թուրք դիվանագետներին: Պատահական չէ, որ Լոնդոնի խորհրդաժողովում թուրքական պատվիրակությունը Հայաստանի հարցում որևէ էական զիջում չարեց:

Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի քաղաքականության փոփոխությունն անթաքույց կերպով դրսևորվեց, երբ 1921 թ. դեկտեմբերին Մեծ Բրիտանիայի կառավարությունը վավերացրեց լորդ Քերզոնի առաջարկած նախագիծը հայ գաղթականների համար Կիլիկիայում «ազգային օջախ» ստեղծելու վերաբերյալ: Այսպիսին էր Սան Ռեմոյի խորհրդաժողովից մինչև Լոնդոնի միջազգային խորհրդաժողովն ընկած ժամանակահատվածում Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի քաղաքականության աստիճանական փոփոխության ընթացքը, քաղաքականություն, որին հայ պետական այրերի ապավինելը կործանարար եղավ թե՛ Հայկական հարցի և թե՛ հայկական անկախ պետականության համար: Փաստորեն, Լոնդոնի խորհրդաժողովը Թուրքիայի հետ Դաշնակից պետությունների հաշտության նոր պայմանագրի կնքման ճանապարհին կարևոր փուլ էր, որի արդյունքում անժամկետ հետաձգվեց Հայկական հարցի լուծումը:

ЛИЛИТ ОГАНИСЯН

кандидат исторических наук, доцент

ПОЛИТИКА ВЕЛИКОБРИТАНИИ В АРМЯНСКОМ ВОПРОСЕ В ПЕРИОД МЕЖДУ КОНФЕРЕНЦИЯМИ В САН РЕМО И ЛОНДОНЕ

РЕЗЮМЕ

В 1920–1921 годах в период между конференциями в Сан Ремо и Лондоне политика Великобритании в Армянском вопросе подверглась постепенному изменению. Если на конференции в Сан Ремо в апреле 1920 г. Великобритания поддерживала идею свободы армянского народа от турецкого господства и создания единого независимого армянского государства, то на лондонской конференции 1921 г. она уже выступала с позиции создания сильной Турции. Что касается необходимости выполнения своего официального объязательства – уважения права самоопределения армянского народа, то британская дипломатия выдвинула программу создания на территории Турции армянского "национального очага", которая не имела ничего общего с законным стремлением самоопределения армян на своей исторической Родине – в Западной Армении.

Великобритания ответственна за задержку и, наконец, за затяжное откладывание освобождения Западной Армении от турецкого господства. Потому, что именно она в основном распоряжалась решением всех вопросов, касающихся послевоенного политического устройства мира.

I.II.IT HOVHANNISYAN
PhD of History, Associate Professor

THE POLICY OF GREAT BRITAIN IN ARMENIAN QUESTION IN THE PERIOD BETWEEN SAN REMO AND LONDON CONFERENCES

SUMMARY

The policy of Britain in Armenian Question has undergone gradual changes in the period between San Remo conference (1920) and London conference (1921). If during the San Remo Conference Great Britain supported the idea of the freedom of the Armenians from Turkish Empire and the unity and independence of two parts of Armenia, in the London Conference it supported the establishment of powerful Turkey.

As for the necessity to realize the formal obligation of revering the right of self-determination of the Armenians, British Diplomacy put forward the plan of establishing Armenian "National Community" in the territory of Turkey in the agenda of London Conference. The latter has nothing common with the legal appeal of all Armenian Diaspora to establish the state in their own motherland -Western Armenia.

Great Britain is responsible for the delay of liberation of Western Armenia from the Turkish domination for it was Britain which managed the solution of all the questions referring to post-war rules of regulating the world order.